

ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Միջոցառման կատարման ժամկետը	Պատասխանատու մարմինը	Ակնկալվող արդյունքը
1.	Ծխախոտային արտադրատեսակների, դրանց փոխարինիչների օգտագործման սահմանափակման արգելքի խախտման նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու համար համայնքային պատասխանատուներ նշանակել բոլոր մարզերում	2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Բոլոր մարզերում և Երևան քաղաքում պատասխանատուների նշանակում
2.	Հասարակական տրանսպորտի կանգառների ծածկերի տակ, համայնքի կողմից երեխաների համար նախատեսված խաղահրապարակներում և խաղային պուրակներում ծխախոտային արտադրատեսակի և դրանց փոխարինիչների օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների առկայության ապահովում	2023 թվականի ընթացքում՝ շարունակական. Մեկնարկը՝ 2023թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	Հասարակական տրանսպորտի կանգառների ծածկերի տակ, համայնքի կողմից երեխաների համար նախատեսված խաղահրապարակներում և խաղային պուրակներում ծխախոտային արտադրատեսակի և դրանց փոխարինիչների օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող փակցված ցուցանակների առկայություն

3.	Ամսեկան առնվազն 1000 հանրային սննդի օբյեկտներ ստուգայցերի իրականացում	2023 թվականի ընթացքում շարունակական. Մեկնարկը՝ 2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ ներքին գործերի նախարարություն	Ամսեկան առնվազն 1000 օբյեկտի ստուգայց
4.	Ծխախոտային արտադրատեսակի և դրանց փոխարինիչների օգտագործման վնասակարության մասին տեղեկատվություն պարունակող պաստառներ տպագրում և շահագրգիռ կողմերին դրանց տրամադրում	2023 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ թվով 1000 պաստառի տպագրում և տրամադրում
5.	«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկմանն ուղղված ստուգումների իրականացում	2023 թվականի ընթացքում շարունակական. Մեկնարկը՝ 2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին	Ամսեկան առնվազն 20 ստուգված օբյեկտ
6.	«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկմանն ուղղված ստուգումների իրականացում	2023 թվականի ընթացքում շարունակական. Մեկնարկը՝ 2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	Ամսեկան առնվազն 20 ստուգված օբյեկտ

7.	Հանրակրթական, առողջապահական և մշակույթային կազմակերպություններում պարբերաբար ստուգայցերի իրականացում	2023 թվականի ընթացքում շարունակական. Մեկնարկը՝ 2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ ներքին գործերի նախարարություն	Ամսեկան առնվազն 500 կազմակերպությունների ստուգում
8.	Կրթական, մշակութային, մարզական, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ծխախոտային արտադրատեսակի և դրանց փոխարինիչների օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների առկայության ապահովման նպատակով պատասխանատուների նշանակում	2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Կրթական, մշակութային, մարզական, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ծխախոտային արտադրատեսակի և դրանց փոխարինիչների օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների առկայության ապահովման նպատակով պատասխանատուների առկայություն